«1+4 ՆԱԽԱԳԻԾ»

# ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ՍՏԱԺԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՆ»

*«Ազգային փոքրամասնության ներկայացուցիչ երիտասարդներին տրվում է ունակությունների զարգացման, գիտելիքների ներկայացման եւ, ամենակարեւորը, զբաղվածության կողմը քայլ կատարելու, տարբեր ոլորտներում երկրի կյանքում ներգրավվելու եւ՝ մասնագիտական առաջընթացի զարգացման հնարավորություն»,- այդ մասին, «Վրաց լեզվով նախապատրաստման հանրակրթական 1+4 ծրագրից» օգտվող անձանց համար, ստաժավորման նորացված ծրագրի ներկայացմանը հայտարարեց Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին:*

Նախագիծը անցյալ տարի՝ պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլու նախաձեռնությամբ, իրականացվեց պիլոտային ընթացակարգով: «1+4 ծրագրից» օգտվող երիտասարդներին տրվեց պետական գերատեսչություններում, ինչպես կենտրոնական, այնպես էլ՝ տեղական ինքնակառավարման մակարդակով, նրանց հետաքրքրող ուղղություններով ստաժավորման անցման հնարավորություն:



Հիշեցնենք, որ «1+4 հանրակրթական ծրագիրը» նախատեսում է աբխազերեն, օսերեն, հայերեն եւ ադրբեջաներեն լեզուներով ընդհանուր ունակությունների քննության հանձնման եւ բուհ ընդունվելու հնարավորություն: Երիտասարդները, մեկ տարվա ընթացքում, անցնում են վրաց լեզվով նախապատրաստման հանրակրթական դասընթաց, որից հետո՝ ուսումը շարունակում իրենց ցանկալի ֆակուլտետներում: Նորացված նախագծի շնորհանդեսին ներկա էին ստաժավորման պիլոտային նախագծի մասնակիցները եւ տարբեր համալսարաններից ազգային փոքրամասնության ներկայացուցիչ երիտասարդները:

Շնորհանդեսի մասնակիցներին խոսքով դիմեցին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին, Վրաստանի հանրային ծառայության բյուրոյի պետ Եկատերինե Քարդավան, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության սոցիալական զարգացման ուղղության ղեկավար Թամար Սիրբիլաձեն, Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի PITA նախագծի ղեկավար Լաշա Ջուղելին, վերոնշյալ պիլոտային ծրագրի մասնակից եւ դրա շնորհիվ զբաղվածության հարցը կարգավորած Ախալցիխեի մունիցիպալիտետի Սխվիլիսի գյուղից Նազիկ Էքնոյանը:

# ՍՏԱԺԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹ՝ «1+4 ԾՐԱԳՐԻ» ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ




*Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետնախարարի աշխատակազմը, Վրաստանի հանրային ծառայության բյուրոյի եւ Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի համագործակցությամբ. սկսում է «Վրաց լեզվով նախապատրաստման հանրակրթական ծրագրից» («1+4 ծրագիր») օգտվող անձանց համար ստաժավորման նախագիծ: Ստաժավորման նախագծի նպատակն է՝ բարելավել Վրաստանում ազգային փոքրամասնության ներկայացուցիչների զբաղվածության հեռանկարները եւ, վերջին հաշվով, աջակցել նրանց ներգրավման եւ քաղաքացիական ինտեգրման գործընթացին:*

Նախագծի շրջանակներում՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին կտրվի՝ մրցույթի հիման վրա նախագծում ներգրավվելու հնարավորություն: Հատուկ ձեւավորված հանձնաժողովը իրավասու է սահմանված չափորոշիչներով իրականացնել ստաժյորների ընտրությունը: Մրցույթը հաջողությամբ անցած հայցորդները, մեկից վեց ամսվա ընթացքում, ստաժավորում կանցնեն պետական հաստատություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում եւ հանրային իրավունքի իրավաբանական անձանց մոտ:

Ստաժավորման նախագծում, մի շարք պետական հաստատությունների թվում, ներգրավված են նաեւ հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետնախարարի աշխատակազմը, Վրաստանի կրթության եւ գիտության, արդարադատության, մշակույթի եւ սպորտի, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման, բնապահպանության եւ գյուղատնտեսության, ֆինանսների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների, Վրաստանի բռնազավթված տարածքներից բռնագաղթված անձանց, վերաբնակեցման եւ փախստականների նախարարությունները, Թբիլիսիի քաղաքապետարանն ու սակրեբուլոն, Քվեմո Քարթլիի պետական լիազոր նահանգապետի աշխատակազմը, Սամցխե-Ջավախեթիի երկրամասային աշխատակազմը, Աջարիայի ինքնավար հանրապետության կառավարության աշխատակազմը, Բաթումիի քաղաքապետարանը, Վրաստանի պետական պաշտպանի աշխատակազմը, Վրաստանի խորհրդարանի Ազգային գրադարանը եւ այլն:

Ստաժավորման ծրագրին մասնակցել ցանկացողները դիմումի ձեւաթուղթը կարող են լրացնել՝ մինչեւ մարտի 31-ը:

Ստաժավորման նախագծում ներգրավված պետական գերատեսչությունների ցանկը կարող եք տեսնել՝ հաշտեցման, քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարության աշխատակազմի պաշտոնական կայքէջում SMR.GOV.GE:

ԿՐԹԱԿԱՆ

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է



*Արդեն մեկնարկել է 2018 թվականի միասնական ազգային քննությունների համար դիմորդների գրանցումը: Ինչպես հայտարարեց գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, դիմորդների գրանցումը կշարունակվի մինչեւ մարտի 30-ի ժամը 18.00-ն: Հատուկ հրավիրված մամլո ասուլիսում՝ Մայա Միմինոշվիլին նշեց, որ միաժամանակ սկսվել է նաեւ դրամաշնորհային մրցույթների համար ուսանողների, մագիստրոսի ընդհանուր քննությունների եւ ուսուցիչների առարկայական քննությունների համար գրանցումները: Դիմորդները գրանցումն անցնելու են էլեկտրոնային տարբերակով, գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի www.naec.gov.ge եւ online.nace.ge կայքէջերում: Գրանցումն իրականացվում է մի քանի փուլով: Մանրամասների համար դիմեցինք գնահատումների եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլուն:*

- Խնդրում ենք՝ մանրամասն ներկայացնել դիմորդների գրանցման գործընթացի փուլերը, եւ դիմորդներն ինչի վրա պետք է բեւեռեն ուշադրությունը՝ այդ գործընթացը հաջողությամբ անցնելու համար:

- Ինչպես արդեն նշեցինք, արդեն մեկնարկել է միասնական ազգային քննությունների համար դիմորդների գրանցումը: Եվ ոչ միայն դիմորդների, այլեւ՝ մագիստրատուրայի համար ուսանողների եւ առարկայական քննությունների համար ուսուցիչների գրանցումը: Դիմորդների համար գրանցումն իրականացվում է երեք փուլով: Այն, ինչպես նշվեց, մեկնարկել է մարտի 7-ին եւ առաջին փուլը կավարտվի մարտի 30-ին, երեկոյան ժամը 6-ին: Գրանցման առաջին փուլը նախատեսում է այն, որ դիմորդն անցնելու է գրանցում, պետք է լրացնի պարտադիր հարցաթերթիկը եւ ընտրի քննությունների քաղաքը: Մարտի 30-ից հետո՝ քննությունների քաղաքը փոխելու հնարավորություն դիմորդը չի ունենա: Թեպետ դրա փոխարեն, երկրորդ փուլում, որը կշարունակվի մինչեւ մայիսի 15-ը, նրան կտրվի ոչ միայն բուհը եւ ուսումնական ծրագիրը, այլեւ՝ քննական այլ առարկայի կամ առարկաների փոփոխման հնարավորություն, որը նա ընտրել էր նախօրոք: Բնականաբար, տվյալ պարագայում՝ խոսքը չի վերաբերում պարտադիր քննություններին՝ ընդհանուր ունակությունների, վրաց լեզվի ու գրականության, ինչպես նաեւ՝ օտար լեզվի քննություններին, քանի որ այդ քննությունները բոլոր դիմորդները հանձնելու են պարտադիր կարգով: Փոփոխման են ենթակա միայն ընտրական քննությունը կամ քննությունները, որը դիմորդի կողմից ընտրվել է՝ ելնելով բուհի ընտրությունից:

Ինչ վերաբերում է երրորդ փուլին, ապա, այդ ժամանակահատվածում էլ դիմորդին վերապահվում է բուհի կամ ուսումնական ծրագրի ցուցակում փոփոխություններ կատարելու հնարավորություն: Այս տարի երրորդ փուլի համար նախատեսված ժամանակահատվածը մեր կողմից երկարաձգվել է: Դիմորդները կունենան՝ մինչեւ օգոստոսի 15-ը բուհի եւ ուսումնական ծրագրերի վերջնական ընտրություն կատարելու հնարավորություն:

Դիմորդներին կոչ եմ անում հնարավորինս առավել ուշադրություն բեւեռել գրանցման գործընթացին, քանի որ դա նշանակալից է: Վերջին հաշվով, հենց դրանից է կախված այն, թե դիմորդները կկարողանա՞ն, արդյոք, մասնակցել ազգային քննություններին եւ՝ որքանով ճիշտ են կարողացել կատարել իրենց համար ցանկալի բուհի ընտրությունը:

Ներկայումս ընթացքի մեջ է առանձին բուհերի հավաստագրման-ավտորիզացման գործընթացը: Եվ հնարավոր է որակի զարգացման կենտրոնը չծրագրված ստուգումներ իրականացնի նաեւ մի շարք այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ելնելով դրանից, ամենայն հավանականությամբ, նշանակալի փոփոխություններ կկատարվեն միասնական ազգային քննությունների համար ներկայացված բուհերի ցուցակում: Ուստիեւ, բոլոր դիմորդներին կոչ եմ անում՝ սահմանված ժամանակահատվածներում անընդմեջ ուշադրությամբ հետեւել այն նորամուծություններին, որը մեր կողմից կհրապարակվի, որովհետեւ, վերջին հաշվով, հնարավոր է ստացվի այնպես, որ դիմորդն իր հայտում նշի կոնկրետ որեւէ բուհ, որը հնարավոր է, զրկվի հավաստագրից եւ ավտորիզացման վկայականից, ինչը ավտոմատորեն հանգեցնում է այդ բուհի դուրսգրմանը՝ միասնական ազգային քննությունների արդյունքներով ուսանող ընդունելու հնարավորություն ունեցող բուհերի ցուցակից:

- Դիմորդները տեխնիկական էլ ի՞նչ սխալներից պետք է խուսափեն գրանցման գործընթացը հաջողությամբ անցնելու համար:

- Էլեկտրոնային գրանցմանն անցնելու փորձը ցույց է տվել, որ դիմորդը պարտադիր կարգով պետք է սեղմի գրանցումը պահպանելու կոճակը, այն հաշվով, որպեսզի դիմորդի կողմից իր հայտում կատարած փոփոխությունները, դիմորդի տվյալները հաստատվեն եւ տեղ զբաղեցնեն մեր տվյալների բազայում: Նշեմ, որ, փոփոխությունները կատարելուց հետո, դիմորդի հայցը ավտոմատորեն փոխանցվում է նրա իսկ կողմից նշված էլեկտրոնային փոստի վրա եւ դա նրա հաստատումն է, որ իրականացված փոփոխությունները եւ ներկայացված տվյալները վավերացվել են մեր բազայում: Եթե դիմորդը ծանուցում չի ստանում, այդ դեպքում նա պարտադիր կարգով կրկին պետք է իր անձնական էջում ստուգի գրանցման առկայությունը, պարզի, թե ինչ թերացում է թույլ տվել փոփոխությունների կատարումը վավերացնելու գործընթացում:

*Էջը պատրաստեց*
*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ*

# ՔՆՆԱՐԿՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ



*Մարտի 15-ին, Հայաստանի նախագահի նստավայրում, տեղի է ունեցել խորհրդակցություն՝ նվիրված Հայաստանում կենսաչափական անձնագրերի եւ նույնականացման քարտերի թողարկման, արդիականացված հանրային հավաստագրերի ենթակառուցվածքի ավտոմատացված համակարգի ներդրման, սպասարկման եւ փոխանցման նպատակով՝ կոնցեսիայի պայմանագիր կնքելու իրավունք շնորհելու՝ միջազգային մրցույթի շրջանակներում իրականացվող աշխատանքների ընթացքին:*

Վարչապետի, կառավարության որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի եւ շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած խորհրդակցության ժամանակ, մրցութային հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների հետ միասին, երկրի նախագահին ներկայացվել են, մատուցվող ծառայությունների որակի բարձրացման նպատակով, կենսաչափական անձնագրերի եւ նույնականացման քարտերի թողարկման, հանրային հավաստագրերի ենթակառուցվածքի ավտոմատացված համակարգերի արդիականացման անհրաժեշտությունը, ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխան նոր համակարգի առավելությունները, նոր կենսաչափական անձնագրի առանձնահատկությունները, պարտադիր կենսաչափական անձնագրերին սահուն անցումն ապահովելու նպատակով նախատեսվող աշխատանքները եւ համակարգի ներդրման գործընթացին վերաբերող այլ հարցեր:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԼԻԲԱՆԱՆ

*Մարտի 12-13-ին, Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը պաշտոնական այցով գտնվում էր Լիբանանում:*



Երկօրյա այցի շրջանակներում՝ Կարեն Կարապետյանը հանդիպումներ ունեցավ Լիբանանի բարձրագույն ղեկավարության՝ նախագահ Միշել Աունի, վարչապետ Սաադ Հարիրիի, խորհրդարանի նախագահ Նաբիհ Բըրիի հետ:

Կարեն Կարապետյանը հանդիպումներ ունեցավ նաեւ Լիբանանի գործարար շրջանակների եւ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Կարեն Կարապետյանի եւ Լիբանանի նախագահ Միշել Աունի հանդիպմանը՝ զրուցակիցները քննարկեցին առեւտրատնտեսական կապերի ընդլայնմանը վերաբերող մի շարք հարցեր, անդրադարձան Հայաստանի համար գործող առեւտրային արտոնյալ ռեժիմներից՝ լիբանանյան ընկերությունների օգտվելու հնարավորություններին, տարբեր ոլորտներում համագործակցությունը խթանելու հեռանկարներին:

Երկուստեք կարեւորվեցին լիբանանահայ համայնքի դերակատարությունը՝ որպես երկու երկրներին կապող եւ հարաբերություններն ամրապնդող օղակ:

Այցի շրջանակներում՝ կայացավ նաեւ Կարեն Կարապետյանի եւ Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրիի հանդիպումը:

# ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ «ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*Մարտի 13-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը խորհրդակցություն է անցկացրել՝ ամփոփելու «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի ստեղծումից հետո անցած ավելի քան մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքի արդյունքները, հիմնադրամի ձեռքբերումներն ու խնդիրները:*

Խորհրդակցությանը, հիմնադրամի խորհրդի անդամներից բացի, մասնակցել են հիմնադրամի տնօրենը, Հայաստանի կենտրոնական բանկի նախագահը, նախագահի աշխատակազմի եւ պաշտպանության նախարարության համապատասխան պաշտոնատար անձինք:

Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը խորհրդակցության մասնակիցներին զեկուցել է հաշվետու ժամանակաշրջանում «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամի գործունեության ֆինանսական հիմնական ցուցանիշները, հիմնադրամի կողմից կատարված հատուցումները, նվիրաբերությունների հավաքագրման եւ գործունեության այլ ուղղություններով իրականացված աշխատանքները:

Խորհրդակցությանը՝ հիմնադրամի տնօրեն, ՀՀ ԿԲ իրավաբանական վարչության պետ Վարուժան Ավետիքյանը ներկայացրել է հիմնադրամի միջոցների կառավարման վերաբերյալ հաշվետվությունը:

Զեկույցները լսելուց հետո խորհրդի անդամներն իրենց գնահատականներն ու տեսակետներն են ներկայացրել՝ հիմնադրամի գործունեության անցած, ավելի քան մեկ տարվա, արդյունքների եւ զարգացման հեռանկարի վերաբերյալ՝ համակարծիք լինելով Հայաստանի նախագահի հետ, որ այս նախաձեռնությունն անչափ կարեւոր է եւ ծառայում է նպատակին:

# «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ՝ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ

*Հայաստանի արդարադատության փոխնախարար Վիգեն Քոչարյանի մասնակցությամբ, Ազգային փոքրամասնությունների կրթամշակութային կենտրոնում, մարտի 14-ին, տեղի է ունեցել «Ազգային փոքրամասնությունների մասին» Հայաստանի օրենքի նախագծի վերաբերյալ հերթական աշխատանքային քննարկում:*

Հանդիպմանը ներկա են գտնվել ԱԺ՝ ազգային փոքրամասնությունները ներկայացնող պատգամավորներ, ինչպես նաեւ՝ Հայաստանի ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող խորհրդի շուրջ երկու տասնյակ անդամներ: Քննարկման նպատակն էր՝ ընդհանուր համաձայնություն ձեւավորել օրենքի նախագծի առանցքային դրույթների վերաբերյալ:

Աշխատանքային քննարկմանը փոխնախարարը մասնակիցներին ներկայացրել է, նախորդ հանդիպման ընթացքում, նրանցից ստացված գրավոր առաջարկությունների հիման վրա օրենքի նախագծում կատարված փոփոխությունները: Այնուհետեւ, ծավալված քննարկումների արդյունքում, Հայաստանի ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների գործունեությունը համակարգող խորհրդի անդամների հետ մի շարք դրույթների վերաբերյալ եւս համաձայնություն է ձեռք բերվել, ինչի արդյունքում՝ խմբագրված օրենքի նախագծի վերջնական տարբերակը, առաջիկայում սահմանված կարգով, կներկայացվի կառավարություն:

## ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ԱՄՆ-ՈՒՄ

*Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած այցի շրջանակներում, մարտի 14-ին այցելեց ԱՄՆ Կոնգրես:*

*Բակո Սահակյանը հանդիպում ունեցավ արտաքին հարցերով հանձնաժողովի մի խումբ անդամների հետ, քննարկեց Արցախ-Միացյալ Նահանգներ հարաբերություններին, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը եւ տարածաշրջանային գործընթացներին վերաբերող հարցեր: Այնուհետեւ, Կոնգրեսում կազմակերպվեց ընդունելություն՝ նվիրված Արցախյան շարժման 30-րդ տարեդարձին: Իր խոսքում, Արցախի նախագահն արժեւորեց Վաշինգտոնի շոշափելի դերակատարությունը՝ տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանման, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ եւ արդարացի կարգավորման գործում: Բակո Սահակյանը Արցախի Հանրապետության պետական պարգեւներ հանձնեց ԱՄՆ-ի մի խումբ կոնգրեսականների եւ սենատորների՝ Արցախին սատարելու եւ Արցախ-ԱՄՆ հարաբերությունների զարգացման գործում շոշափելի ներդրում ունենալու համար:*

## ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԸ ԵՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԴԱՐՁԱՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ



*Երեւանցի հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, Հայաստանի Ազգային ժողովի 4-5-րդ գումարումների պատգամավոր, «Վիրահայերի միասնություն» հայրենակցական միության նախագահ, ծնունդով Նինոծմինդայի շրջանի փոքրգոնդուրայցի Տաճատ Վարդապետյանը դարչյալ խորհրդարանի անդամ է:*

*Դա տեղի ունեցավ այս օրերին, երբ ՀՀ ԱԺ պատգամավոր Հրայր Թովմասյանը, ՀՀ նախագահի հրամանով, նշանակվեց Սահմանադրական դատարանի դատավոր, եւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ որպես պատգամավոր, ճանաչեց ՀՀ կուսակցության համամասնական ցուցակով հաջորդի՝ Տաճատ Վարդապետյանի լիազորությունը:*

*Տաճատ Վարդապետյանը 52 տարեկան է, ծնվել է Վրաստանի Նինոծմինդայի շրջանի Փոքր Գոնդուրա գյուղում, մանկավարժի ընտանիքում: 1991թ. ավարտել է Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ֆինանսա-հաշվային ֆակուլտետը, ապա 1995թ.՝ ասպիրանտուրան, տնտեսագետ-ֆինանսիստ մասնագիտությամբ:*

*2007-2012 թթ. Հայաստանի ԱԺ պատգամավոր է ընտրվել համամասնական ընտրակարգով Հայաստանի Հանրապետական կուսակցությունից, եղել է ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: Նշենք, որ Վարդապետյանը զբաղվում է նաեւ գրական գործունեությամբ. խմբագրել է մեծ բանաստեղծ Վահան Տերյանի «Ընտիրը» բանաստեղծությունների ժողովածուն:*

*Պարգեւատրվել է «Ֆրիտյոֆ Նանսեն» ոսկե հուշամեդալով: Ասենք, որ Տաճատ Վարդապետյանը հմուտ եւ ուժեղ շախմատիստ է. 2014թ. հունիսի 22-ին ՀՀԿ ԱԺ պատգամավոր Տաճատ Վարդապետյանը 3,5 րոպեում կարողացավ հաղթել աշխարհի 16-րդ չեմպիոն, նորվեգացի Մագնուս Կառլսենին: 5-րդ գումարման պատգամավորը այսօր էլ նույն եռանդով ու պատրաստակամությամբ է գնում խորհրդարան:*

*Վարդապետյանը հավաստում է, որ իր ուշադրությունից դուրս չեն լինի ջավախահայերի եւ վիրահայերի խնդիրները, ինքը ջանք ու եռանդ չի խնայի վրաց-հայկական հարաբերությունների ամրապնդման համար: Նախաձեռնել է նաեւ իր հայրենի Նինոծմինդայի շրջանի Փոքր Գոնդուրա գյուղի Սուրբ Ղեւոնդյաց եկեղեցու շինարարությունը:*

*«Վրաստան» թերթը շնորհավորում է Տաճատ Վարդապետյանին՝ Հայաստանի ԱԺ պատգամավոր դառնալու կապակցությամբ:*

## ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ՝ 30 ՍՈՐՏ ԽԱՂՈՂԻ

*Հայաստանում առաջին անգամ մեկնարկել է մի ծրագիր, որով խաղողի շուրջ 300 վայրի եւ տեղածին սորտ անձնագիր կունենա: Ծրագիրն իրականացվում է՝ ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպության (ՖԱՕ) հիմնած, կոլեկցիոն եւ ցուցադրական այգում ներառված սորտերի համար: Հայաստանի խաղողագործության եւ գինեգործության հիմնադրամի տնօրեն Զարուհի Մուրադյանի խոսքով, հավաքագրվել են շուրջ 298 վայրի եւ տեղածին սորտեր, Բջջաբանության ինստիտուտի մասնագետների հետ ֆենոտիպային ու գենոտիպային հետազոտություն է իրականացվում՝ յուրաքանչյուր սորտի անձնագրի ստեղծման ուղղությամբ: «Կստեղծվի նաեւ էլեկտրոնային տեղեկատվական բազա, որտեղ հավաքագրվելու է ողջ տեղեկատվությունը: Առաջին անգամ է Հայաստանում նմանատիպ աշխատանք կատարվում»,- ասաց Զարուհի Մուրադյանը: Նրա խոսքով, տեղեկատվությունը հասանելի կլինի նաեւ գրքի տեսքով:*

CyanMagentaYellowBlack



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՄԱՐՏ



*17.03.2018. Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ սոսկալի չարչարանքների ու Խոր Վիրապ մտնելու հիշատակության օր*

*18.03.2018. Գալստյան կիրակի*

*24.03.2018. Ղազարոսի հարության հիշատակության օր*

## ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

# ՍԿՍՎԵԼ Է ՏԵՍԱՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ




***Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, ելնելով Վրաստանի վարչական իրավախախտման օրենսգրքով սահմանված տեսատուգանքների կատարման նոր կարգից, գերատեսչության պաշտոնական police.ge կայքէջում սկսել է հրապարակել տեսատուգանքների կտրոնները:***

Տուգանային կտրոնների հրապարակումից 30 օրվա ընթացքում՝ այն համարվում է օրինականորեն ներկայացված:

Հիշեցնենք, որ, 2017 թվականի նոյեմբերի 1-ից գործարկված կարգավորման համաձայն, տեսախցիկով վավերացված իրավախախտման վերաբերյալ, իրավախախտողը ստանում է հակիրճ հաղորդագրություն: Եթե հաղորդագրությունը ստանալուց 10 օրվա ընթացքում, իրավախախտողը վճարում է տուգանքը, ապա՝ օգտվում է 20 տոկոսի զեղչից: Եթե իրավախախտողը, հաղորդագրության ստացումից 10 օրվա ընթացքում, տուգանքը չի մարում, ապա տուգանքային կտրոնը նրան է առաքվում փոստով՝ ըստ բնակության հասցեի: Ըստ բնակության հասցեի՝ տուգանային կտրոնի հանձնումից 30-ից 60 օրվա ընթացքում, տուգանքի չհանձնման դեպքում, իրավախախտողը կրկնակի նախազգուշացում է ստանում: Կրկնակի զգուշացումից հետո, իրավախախտողի կողմից տուգանքը չմարելու դեպքում, ներքին գործերի նախարարությունը հաղորդագրությունը հրապարակում է իր պաշտոնական կայքէջում: Հրապարակայնորեն հաղորդագրության տարածումից հետո, 30 օրվա ընթացքում, այն համարվում է օրինականորեն ներկայացված: Քաղաքացին պարտավոր է, տեսատուգանքի կտրոնի ստացումից հետո, առնվազն 30 օրվա ընթացքում, մարել տուգանքը:

## ՀՅՈՒՐԱԽԱՂ

# ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԸ «ԱՐՏԱՎԱԶԴ» ՓԱՌԱՏՈՆԻՆ ՀԱՆԴԵՍ ԵԿԱՆ «ՕՐԸ ԱՆՁՐԵՎՈՏ» ԲԵՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ

***Ներկայացումը կայացավ մարտի 13-ին, Երեւանի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում: Հայաստանի Թատերական գործիչների միության կողմից կազմակերպվող «Արտավազդ» փառատոնը ունի տասը տարվա պատմություն: Ըստ ավանդույթի, փառատոնի ավարտին, հատուկ հանձնաժողովը, հռչակում է տարբեր անվանակարգերում ճանաչված հաղթողներին: Այս տարի փառատոնին մասնակցում է 32 թատրոն, մրցանակաբաշխության օրը կայանալու է մարտի 27-ին Հայաստանի Գորիս քաղաքում:***



Արմեն Բայանդուրյանը երեւանյան մամլո ասուլիսում

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը միակն է, որ մասնակցում է փառատոնին՝ իբրեւ հայրենիքից դուրս գործող: Նշենք, որ այս տարվա «Արտավազդը» թվով չորրորդն է ադամյանցիների համար: Փառատոնին թատրոնը ներկայացավ «Օրը անձրեւոտ» բեմադրությամբ, որի հեղինակն ու բեմադրիչը թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանն է:

«Վրաստան» թերթի հետ զրույցում Արմեն Բայանդուրյանը նշեց, որ պիեսի պրեմիերան կայացել է անցած տարի Հունաստանի Կատերինե քաղաքում՝ Միջազգային թատերական փառատոնի շրջանակներում, եւ արժանացել առաջին մրցանակի: Ըստ նրա, հայաստանյան հանդիսատեսը եւս ջերմությամբ ու բուռն ծափահարություններով ընդունեց ներկայացումը: Ոմանք արդեն ծանոթ էին պիեսին, քանի որ Հայաստանում «Օրը անձրեւոտ»-ը արդեն բեմադրվել է անվանի ռեժիսոր Վահե Շահվերդյանի կողմից:

- ***«Արտավազդից» մենք արդեն երեք մրցանակ ունենք,*** - ասում է Ա. Բայանդուրյանը:- ***Այսպես, Մ.Լադոյի «Սովորական պատմություն» ներկայացումն արժանացել է «Լավագույն ներկայացում» մրցանակի, Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված «Այս գիշեր ոչ ոք չի քնելու» բեմադրության դերասանուհիներից Լեյլա Մկրտչյանը՝ «Լավագույն դերակատարուհի», իսկ Ն.Դումբաձեի «Մեղադրական եզրակացության» դերակատարներից Վրաստանի ժողովրդական դերասան Սոսո Լաղիձեն՝ ՀՀ Մշակույթի նախարարության Ոսկե մեդալի եւ «Լավագույն դերակատար» մրցանակի:***

- ***Թե ինչպիսին կլինի ադամյանցիների տարվա մրցանակը, պարզ կդառնա մարտի 27-ին,*** - հավելեց Ա. Բայանդուրյանը:

Նշենք, որ Հայաստան այցի շրջանակներում՝ թատրոնի գեղարվեստական ղեկավարը հանդիպել է լրագրողների հետ: Մամլո ասուլիսի ընթացքում Ա.Բայանդուրյանը խոսել է թատրոնի շենքի վերակառուցման, ընթացիկ աշխատանքների, թատերախմբի ներկայիս գործունեության եւ թարմացվող խաղացանկի շուրջ:

## ՍՊՈՐՏ

### ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆԸ՝ 4-6 ՏԵՂՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ



Հայկական շախմատի առաջատար Լեւոն Արոնյանը, հավակնորդների մրցաշարի 5-րդ տուրից հետո, կիսում է 4-6-րդ տեղերը:

Բեռլինում ընթացող հավակնորդների մրցաշարի 5-րդ տուրից հետո, առաջատարը՝ 3,5 միավորով, Ֆաբիանու Կարուանան է: 3-ական միավորով՝ 2-3 տեղերն են կիսում Վլադիմիր Կրամնիկը եւ Շախրիյար Մամեդյարովը: Արոնյանը, Գրիշչուկը եւ Լիժենն ունեն 2,5 միավոր եւ կիսում են 4-6 տեղերը: 1,5 միավոր ունեն Սերգեյ Կարյակինը եւ Ուեսլի Սոն:

14 տուրի ընթացքում՝ շախմատիստները միմյանց հետ կխաղան երկուական անգամ՝ սպիտակ եւ սեւ խաղաքարերով: Գրոսմայստերները կունենան 4 հանգստյան օր: Հաղթողն իրավունք կստանա մրցամարտ անցկացնել՝ աշխարհի չեմպիոն Մագնուս Կառլսենի հետ, որը կկայանա նոյեմբերի 9-28-ին, Լոնդոնում:

### ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՆՈՐ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային նոր աղյուսակը: Վրաստանի թիմը, իր դիրքերը զիջելով մեկ հորիզոնականով, նոր սանդղակում զբաղեցրել է 101-րդ տեղը, իսկ Հայաստանի հավաքականը պահպանել է իր դիրքերը՝ մնալով 91-րդ տեղում:

Լավագույն 10-յակում են Գերմանիայի, Բրազիլիայի, Պորտուգալիայի, Արգենտինայի, Բելգիայի, Լեհաստանի, Իսպանիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Չիլիի հավաքականները:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Հողատապ: 9.Քաղաք Վրաստանում՝ Դեդոփլիս ...: 10.Հնդեվրոպական լեզու, հինդուստանական լեզուների գործառական ձեւ: 11.Իմաստով մոտ բառեր: 13.Հոգատարություն: 16.Սառը զենք: 17.Հարվածային երաժշտական գործիք: 19.Որեւիցե բանի նախաբան: 22.ՌԴ էստրադային խումբ: 24.Կարճր բյուրեղային ապար: 25.Տուփ: 27.Միաբջիջ կենդանի: 29.Յուրահատուկ: 32.Տպել: 33.Ղազախստանի մայրաքաղաքը: 35.Համառություն, կամակորություն: 37.Մեսրոպյան այբուբենի տառ: 39.Ծովային ուտելի, անատամ: 40.Ջավարի կորկոտով եւ ցորենով պատրաստվող պասուց կերակուր: 43.Ճապոնիայի տարադրամը: 44.Գետ Հյուսիսային Կովկասում: 47.Քարանձավ, քարայր: 49.Խորհրդային գեներալ Ալեքսանդր ...: 50.Հոնկոնգցի դերասան... Չան: 53.Քարթլիի թագուհի, Վրաց Ուղղափառ եկեղեցու Սրբերից: 54.Քաղաք Ճապոնիայում: 55.Իրանահայ երգիչ: 57.Քաղաք Ֆրանսիայում: 58.Կաբարդինո-Բալկարիայի մայրաքաղաքը:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ծուռթաթ ձագ: 2.Խաշած ու մաքրած ցորեն, կորկոտ: 3.Կելտացի քուրմ: 4.Այրվող օգտակար հանածո: 5.Վրացի կինոռեժիսոր ... Ղողոբերիձե: 6.Աչքի վերեւում: 8.Մ.թ.ա. 170-145թթ. Իբերիայի թագավոր, հայոց Արտաշես I թագավորի որդին: 12.Տուրգենեւի երկերից: 14.Վրացի ռեժիսոր ... Մաչաիձե: 15.Հորթ: 18.Բելգրադի բնակիչ: 19.Շվի: 20.Խորհրդային դերասան ... Սմոկտունովսկի: 21.Լավ կերակրել, գիրացնել: 23.Աֆրիկական ծառ: 26.Ճապոնական համալիր-վարժություն: 28.Լեռ պատմական Կիլիկյան Հայաստանում՝ Միջերկրական ծովի ափին: 29.Ռուսական ավտոմեքենա: 30.Փափուկ կոնֆետ: 31.Ծուլանալ: 34.Մարզկենտրոն ՌԴ-ում: 36.Ամերիկացի գրող ... Բրաուն: 38.Կենդանակերպի նշան: 41.Լոկատոր: 42.Մարզ, նահանգ: 45.Վայրի հնդկահավ: 46.Բագրատունի Հայոց թագավոր: 48.Կիլոկալորիա: 51.Հարցական դերանուն: 52.Անասունների ամբողջական մորթուց պատրաստված պարկ՝ հեղուկներ եւ սննդամթերք պահելու համար: Վրացական նախկին հեռուստաալիք: 56.Հանգուցյալի մարմին:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Լիցեյ: 4.Նորահարս: 10.Սագ: 11.Աթաբեկ: 13.Տիրանա: 15.Կամո: 17.Գավ: 18.Սոնա: 19.Ձով: 20.Նամ: 21.Շուշի: 23.Պերու: 25.Ինի: 27.Անհուսալի: 30.Գորտ: 31.Անբան: 32.Կաքավ: 35.Անապա: 36.Կավ: 40.Ռուզան: 42.Ալազանի: 45.Իրար: 47.Թզենի: 48.Հարիսա: 49.Նամ: 50.Գրոշ: 52.Բորան: 55.Թազա: 58.Նեսո: 60.Ապ: 61.Արփա: 62.Անա: 63.Կրակ: 64.Ժակլին:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Իրաք: 3.Երեկո: 4.Նատո: 5.Ոգի: 6.Արագվի: 7.Աղավնի: 8.Սուրենյանց: 9.Մանուշ: 12.Կանպուր: 14.Նա: 16.Մաեստրոն: 18.Սինգապուր: 19.Ջուլեյկա: 22.Շա: 24.Րա: 26.Նանտ: 28.Հովազ: 29.Ակակի: 33.Ան: 34.Քառատող: 37.Ալթայ: 38.Վազ: 39.Վանա: 41.Անակոնդա: 43.Ջենիթ: 44.Նիմ: 46.Սիրաս: 50.Գեղամ: 51.Կապան: 53.Րե: 54.Նոյ: 56.Ջանի: 57.ՄԱԿ: 59.Գեա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445